ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 հուլիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

103
(3312)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ–Ն ՀԵՐԹՈՎ ՓԱԿՈՒՄ Է ԴՌՆԵՐԸ

ԱԺ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի քաղաքական դիրքերը իշխանական թիմում շարունակում են ոչ միայն թուլանալ, այլեւ՝ վերանալ: Վերջին ամիսներին նա մեկը մյուսի հետեւից կորցնում է ազդեցիկ պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունները, իսկ նախորդ օրը գրանցվեց հերթական անհաջողությունը. իշխող կուսակցությունը մերժեց նաեւ նրա թեկնածությունը Ազգային Ժողովի աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում: Հանձնաժողովի նախագահի թեկնածու ընտրվեց Նազելի Բաղդասարյանը, իսկ Արթուր Հովհաննիսյանը նիստի մեկնարկից հետո ընդամենը 10 րոպե անց լքեց ՔՊ գրասենյակը:

Սա, սակայն, Հովհաննիսյանի առաջին անհաջողությունը չէ: Ավելի վաղ նա չընտրվեց ՔՊ վարչության անդամ՝ չնայած կուսակցության ներսում ուներ մեծ հավակնություններ: Դրանից հետո դժվարությամբ տեղ գտավ կուսակցության նախընտրական ցուցակի ոչ պատվաբեր 22 համարում: Այնուհետեւ, արդեն նոր գումարման Ազգային Ժողովում, Հովհաննիսյանը փորձել էր առաջադրվել նաեւ ՔՊ խմբակցության ղեկավարի պաշտոնում, սակայն այդ նախաձեռնությունը եւս աջակցություն չստացավ, եւ նա կրկին մերժվեց:

«Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրների փոխանցմամբ՝ այս անհաջողությունները պատահական չեն: Կուսակցության ներսում արդեն որոշված է, որ Արթուր Հովհաննիսյանը չի մնա նաեւ ՔՊ խմբակցության քարտուղարի պաշտոնում: Ըստ նույն աղբյուրների՝ նա կլինի շարքային պատգամավոր՝ առանց քաղաքական ազդեցության եւ որոշումների կայացման գործընթացում էական դերակատարության:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Գողություն հայկական ձեւով» ֆիլմի արտադրության շուրջ ծագած վեճը հասել է դատարան: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ Ոսկու շուկայի Վաղարշ անունով հայտնի գործարարի «Վաղարշ եւ որդիներ կոնցեռն» ՍՊԸ-ն վարչական դատարան է դիմել ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝ պահանջելով ընդունել իր համար բարենպաստ վարչական ակտ եւ տրամադրել օրենքով նախատեսված պետական աջակցությունը: Մասնավորապես, ընկերությունը դատարանից պահանջում է պարտավորեցնել ԿԳՄՍ նախարարությանը՝ 2026 թվականի ապրիլի 21-ին ներկայացված հայտի հիման վրա ընդունել վարչական ակտ, որով «Վաղարշ եւ որդիներ կոնցեռն» ՍՊԸ-ին կտրամադրվի «Գողություն հայկական ձեւով» ֆիլմի արտադրության նպատակով կատարված եւ փաստացի ներդրված դրամական ծախսերի 25 տոկոսի չափով փոխհատուցում: Գործի նյութերից պարզ է դառնում, որ ընկերությունը զգալի ներդրումներ է կատարել ֆիլմի արտադրության համար եւ այժմ պահանջում է, որպեսզի նախարարությունը վերադարձնի այդ ծախսերի օրենքով նախատեսված 25 տոկոսը: Ըստ ներկայացված հաշվարկների՝ պահանջվող գումարը կազմում է շուրջ 200 հազար ԱՄՆ դոլար:



Ազգային Ժողովում լրագրողների աշխատանքի նկատմամբ կիրառվող սահմանափակումները նոր երեւույթ չեն: Դրանք դեռ 2021 թվականից բազմիցս արժանացել են լրագրողական կազմակերպությունների, խոսքի ազատությամբ զբաղվող կառույցների եւ քաղաքացիական հասարակության խիստ քննադատությանը՝ որպես անհամաչափ, հակաժողովրդավարական եւ լրատվամիջոցների մասնագիտական գործունեությունը խոչընդոտող մեխանիզմներ: Ուստի այն, ինչ վերջին օրերին կրկին հայտնվեց ուշադրության կենտրոնում, իրականում ոչ թե նոր սահմանափակում է, այլ վաղուց քննադատվող կարգ, որի վերանայման անհրաժեշտության մասին տարիներ շարունակ բարձրաձայնվում է: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ, ի թիվս այլ լրատվամիջոցների, հրապարակել էր, որ Ազգային Ժողովի նախագահի պարտականությունները ժամանակավորապես կատարող Ռուբեն Ռուբինյանի ստորագրությամբ հաստատվել են խորհրդարանի նստավայրի տարածքում եւ շենքում գործող անվտանգության կանոնները, որոնք վերաբերում են նաեւ հավատարմագրված լրագրողների աշխատանքին: Փաստաթղթով սահմանվում է, որ լրագրողները կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել միայն հատուկ առանձնացված վայրերում, իսկ խորհրդարանի մյուս հատվածներում աշխատելու համար պետք է ստանան ԱԺ աշխատակազմի ղեկավարգլխավոր քարտուղարի թույլտվությունը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՔՊ-ում Ալեն Սիմոնյանի դիրքերի թուլացման մասին խոսակցությունները ստացան հերթական դրսեւորումը: Իշխող կուսակցության վարչությունը մերժեց նրա ամենամոտ թիմակիցներից մեկին՝ Հասմիկ Հակոբյանին, որը միաժամանակ առաջադրվել էր Ազգային Ժողովի երկու մշտական հանձնաժողովների նախագահի պաշտոնում: Խոսքը մարդու իրավունքների պաշտպանության մշտական հանձնաժողովի եւ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման մշտական հանձնաժողովի մասին է: Առաջինի նախագահի թեկնածուի պաշտոնում ՔՊ-ն ընտրեց Զարուհի Բաթոյանին, երկրորդում՝ Տրդատ Սարգսյանին: Հատկանշական է, որ ընտրված թեկնածուներից ոչ մեկը կուսակցության վարչության անդամ չէ, մինչդեռ Հասմիկ Հակոբյանը վարչության անդամ է եւ համարվում է Ալեն Սիմոնյանի ամենամտերիմ թիմակիցներից մեկը: Ազգային Ժողովի դեռեւս նախագահ Ալեն Սիմոնյանը չէր մասնակցում ո՛չ ՔՊ վարչության նիստին, ո՛չ էլ քվեարկություններին: Նա արտերկրում հանգստանում է: «Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրների փոխանցմամբ՝ երեկվա քվեարկությունները պատահական չէին եւ փաստացի խորհրդանշեցին Սիմոնյանի ներկուսակցական ազդեցության նվազումը: Նույն աղբյուրների գնահատմամբ՝ նրա քաղաքական մեկուսացման գործընթացում առանցքային դեր են ունեցել երեք կանայք՝ օգնականից խորհրդական դարձած Աշխեն Հայրապետյանը, որը հայտնի է իբրեւ Սիմոնյանի արդուկ անող, նախկին օգնական, այժմ պատգամավոր եւ ՔՊ վարչության անդամ Հասմիկ Հակոբյանը, ինչպես նաեւ ԱԺ լրատվության վարչության պետ, Հովիկ Աղազարյանի նախկին օգնական Լաուրա Անտոնյանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ»

Armlur.am-ը զրուցել է Էդուարդ Շարմազանովի հետ:

- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են ընդդիմադիր գործիչների նկատմամբ հարուցվում քրեական գործեր:

- Իմ համոզմամբ՝ բոլոր այն քաղաքական ուժերն ու գործիչները, որոնք պաշտպանում են ազգային պետության գաղափարը եւ դեմ են Ադրբեջանի պահանջների իրականացմանը, ենթարկվում են քաղաքական հետապնդումների: Ես այս իշխանությանը հաճախ համեմատում եմ բոլշեւիկյան իշխանության հետ: 1920 թվականից հետո բոլշեւիկները դատապարտեցին եւ կալանավորեցին Առաջին Հանրապետության բազմաթիվ պետական ու քաղաքական գործիչների: Այսօր, իմ գնահատմամբ, նույն տրամաբանությունն է գործում. նրանք, ովքեր խանգարում են իշխանության ծրագրերի իրականացմանը, ենթարկվում են կալանավորման, պիտակավորման եւ քաղաքական ճնշումների: Բացի այդ, կա նաեւ սեփականության իրավունքի պաշտպանության հարցը: Սահմանադրությամբ եւ միջազգային իրավունքի նորմերով սեփականության իրավունքը պետք է պաշտպանված լինի, սակայն մենք տեսնում ենք, որ առանց դատարանի վերջնական որոշումների մարդկանց նկատմամբ կիրառվում են կոշտ միջոցներ: Պարոն Ծառուկյանի դեպքում եւս, իմ կարծիքով, գործ ունենք քաղաքական պատվերի հետ:

- Ի՞նչ պետք է անի ընդդիմությունը ստեղծված իրավիճակում:

- Ես երբեք չեմ պնդել, թե ունեմ բոլոր լուծումները: Եթե ունենայի, վաղուց կկիրառեի: Սակայն կարծում եմ, որ այս իրավիճակում անհրաժեշտ են օրինական անհնազանդության եւ փողոցային պայքարի ձեւեր: 2021 թվականի ընտրություններից հետո արդեն ակնհայտ էր, որ բազմաթիվ խնդիրներ կային ընտրական գործընթացում: Երբ տեսանք, թե ինչպես էին, մեր գնահատմամբ, խախտումներ տեղի ունենում, եւ մինչեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական արդյունքների հրապարակումը գործող վարչապետը հայտարարեց իր հաղթանակի մասին, կարծում եմ՝ ընդդիմությունը պետք է համախմբվեր եւ սկսեր ակտիվ պայքար:

Ես ինքս պետական պաշտոններ զբաղեցրած մարդ եմ եւ գիտեմ, որ երբ ընդդիմությունը կարողանում է մարդկանց դուրս բերել փողոց, իշխանությունը դա զգում է: Ես չեմ ասում, որ Նիկոլ Փաշինյանը հաջորդ օրը կհեռանա, բայց չի կարելի թույլ տալ, որ իշխանությունը գործի լիակատար հարմարավետության պայմաններում:

- Իշխանությունը նախկինում պարոն Ծառուկյանին բնութագրում էր որպես խոշոր սեփականատեր, իսկ այսօր ընդդիմությունն ասում է, որ նա քաղաքական բանտարկյալ է: Ինչպե՞ս եք դա մեկնաբանում:

- Սա հռետորական հարց է: Եթե մարդը զրկվում է ազատությունից իր քաղաքական գործունեության, իր արտահայտած կարծիքի կամ քաղաքական դիրքորոշման համար, ապա նա քաղաքական բանտարկյալ է:

Մեր գնահատմամբ՝ պարոն Ծառուկյանի, Արմեն Աշոտյանի եւ մյուս կալանավորված ընդդիմադիր գործիչների դեպքերում առկա է քաղաքական շարժառիթ: Հանրապետական կուսակցությունն այդ գնահատականը տվել է իր պաշտոնական հայտարարությամբ:

- Միաժամանակ խորհրդարան անցած ընդդիմությունը վերցրեց իր մանդատները, ինչի համար հաճախ քննադատվում է: Ինչպե՞ս եք գնահատում այդ որոշումը:

- Այդ թեմայով շատ է խոսվել, եւ կարծում եմ՝ անիմաստ է կրկին վերադառնալ նույն մեղադրանքներին:

Իմ համոզմամբ՝ մանդատ վերցնելը կամ չվերցնելը ինքնին ոչինչ չի նշանակում: Կարելի է մանդատ ունենալ եւ ոչինչ չանել, կարելի է մանդատ ունենալ ու շատ արդյունավետ աշխատել: Նույն կերպ կարելի է հրաժարվել մանդատից եւ ոչինչ չանել կամ, հակառակը, ակտիվ պայքարել: Այսինքն՝ մանդատը չէ, որ որոշում է պայքարի արդյունավետությունը:

Այսօր առաջնայինը պետք է լինի համախմբումը, ոչ թե միմյանց մեղադրելը:

- Ի՞նչ ուղերձ ունեք հասարակությանը:

- Այս հարցն այլեւս միայն քաղաքական չէ: Խոսքը Հայաստանի պետականության մասին է: Ինձ համար կարեւոր չէ որեւէ առանձին քաղաքական գործչի ճակատագիրը, որքան կարեւոր է այն գաղափարը, որի համար պայքարում ենք:

Ես համոզված եմ, որ նրանք, ովքեր պաշտպանում են Հայաստանի Անկախության հռչակագիրը եւ պետականության հիմքերը, հայրենասեր մարդիկ են: Իսկ նրանք, ովքեր պայքարում են այդ հիմքերի դեմ, իմ կարծիքով, չեն կարող ծառայել Հայաստանի ազգային շահերին:

Այսօր անհրաժեշտ է համախմբվել, տարբերել առաջնայինն ու երկրորդականը եւ միասնական պայքար մղել: Պետք չէ ընդդիմության ընդդիմությունը դառնալ: Պետք է նստել, քննարկել եւ գտնել համատեղ գործողությունների ճանապարհ:

Ինչպես Գարեգին Նժդեհն է ասել՝ «Մեր դժբախտությունների պատճառը նախ եւ առաջ մենք ենք, եւ մեր փրկությունը մեր մեջ է»:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՇՈՒՐՋ 23.9 ՄԼՆ ԴՐԱՄ ԿՀԱՏԿԱՑՆԻ

Կառավարության երեկվա նիստի օրակարգում ընդգրկված էր նախագիծ, որով նախատեսվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 23 մլն 937 հազար 400 դրամ՝ «Սեւանի շուրջ» սիրողական հեծանվային արշավի կազմակերպման համար:

Նախագծի հիմնավորման համաձայն՝ միջոցառումը կանցկացվի ՀՀ վարչապետի հովանու ներքո՝ 2026 թվականի օգոստոսին: Նախատեսվում է կազմակերպել երկօրյա սիրողական հեծանվային արշավ, որին կմասնակցեն շուրջ 170 մարդ՝ Հայաստանի տարբեր մարզերից եւ քաղաքներից: Մասնակցության իրավունք կունենան 18 եւ բարձր տարիքի անձինք:

Ինչպես տեղեկացավ ArmLur.am-ը, հիմնավորման մեջ նշվում է, որ 2024 թվականին անցկացված «TOUR DE SEVAN 2024» հեծանվարշավը դրական արձագանք է ստացել հեծանվորդների շրջանում, ինչի արդյունքում որոշում է կայացվել շարունակել նախաձեռնությունը:

Ըստ հիմնավորման՝ միջոցառման նպատակն է խթանել հեծանվային սպորտի եւ առողջ ապրելակերպի մասսայականացումը, ներկայացնել հեծանիվը որպես էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոց, զարգացնել սպորտային տուրիզմը, ինչպես նաեւ Սեւանա լիճը ներկայացնել որպես միջազգային սպորտային միջոցառումների անցկացման գրավիչ վայր:

Նախագծով առաջարկվում է անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովել «Մասսայական սպորտ» ծրագրի շրջանակում՝ կառավարության պահուստային ֆոնդից կատարվող վերաբաշխման միջոցով:

Համապատասխան որոշումն ընդունվել է կառավարության երեկվա նիստում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հուլիսի 29-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն այցելել է ՀՀ պաշտպանության նախարարության Երեւանի կայազորային հոսպիտալ: ՄԻՊ աշխատակազմի փոխանցմամբ՝ այցի ընթացքում հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել սոցիալական հարթակներում տարածված ժամկետային զինծառայող Ա. Հ.-ի իրավունքներին առնչվող հարցերը: «Պաշտպան Անահիտ Մանասյանը բժիշկ-հոգեբույժի մասնակցությամբ խորհրդապահական առանձնազրույց է ունեցել զինծառայողի հետ, լսել զինծառայողին մտահոգող խնդիրները: Ուսումնասիրվել են նաեւ բժշկական փաստաթղթերը: Նշված զինծառայողին առնչվող բոլոր հարցերն այս պահին էլ հասցեավորվում են ըստ իրավասության:

Այս հարցը գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: Ուսումնասիրության արդյունքների ամփոփումից հետո հրապարակման ենթակա տեղեկությունների առնչությամբ ՄԻՊ հաստատությունը հանդես կգա լրացուցիչ»,- ասվում է հաղորդագրությունում:

Նախօրեին տեղեկություններ էին տարածվել, որ դաժան ծեծի է ենթարկվել 19 ամյա ժամկետային զինծառայող Ա.Հ-ն: Նշվում էր, որ նրա վիճակն այնքան ծանր է եղել, որ ստիպված են եղել տեղափոխել Կանազի հոսպիտալ: Ավելի ուշ ՊՆ-ն հաղորդագրություն տարածեց՝ նշելով, որ զինծառայող Ա. Հ.-ի դաժան ծեծի կամ առհասարակ ծեծի ենթարկվելու վերաբերյալ տեղեկությունները սուտ են. նա զինվորական հոսպիտալ է ընդունվել այլ առողջական խնդրով:

ՆՈՐ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթի՝ հուլիսի 10-ի հրապարակումը հաստատվեց:

Ինչպես երեկ ճեպազրույցի ժամանակ հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը, վարչապետի մամուլի քարտուղարի պաշտոնում կնշանակվի Մելանյա Հարությունյանը:

Հիշեցնենք, որ հուլիսի 10-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վարչապետը նոր մամուլի խոսնակի ընտրության փուլում է, եւ քննարկվող թեկնածուների թվում են ՔՊ երիտասարդական կառույցի ներկայացուցիչներ Էլինա Իշխանյանը, Մելանյա Հարությունյանը եւ Սյուզաննա Սայադյանը:

Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այդ փուլում հենց Մելանյա Հարությունյանն էր համարվում հիմնական հավակնորդներից մեկը:

Նշենք, որ գործող մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը լքում է պաշտոնը՝ վերցնելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորական մանդատը եւ վերադառնալով Ազգային Ժողով:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Ադրբեջանում պահվող հայ գերիների եւ Արցախի նախկին ռազմաքաղաքական ղեկավարների հարցը շարունակում է մնալ միջազգային ուշադրության կենտրոնում, սակայն վերջին մեկ շաբաթվա ընթացքում նրանց ճակատագրի վերաբերյալ էական առաջընթաց չի արձանագրվել:

Այս օրերին միջազգային իրավապաշտպան կառույցներն ու նախաձեռնությունները շարունակում են պահանջել Բաքվում պահվող հայ գերիների եւ կալանավորված անձանց անհապաղ ազատ արձակումը: Միաժամանակ, Ռուբեն Վարդանյանի որդին՝ Դավիթ Վարդանյանը, հերթական անգամ միջազգային հանրությանը կոչ է արել գործնական քայլեր ձեռնարկել՝ ընդգծելով, որ տարածաշրջանում կայուն խաղաղություն հնարավոր չէ, քանի դեռ հայ գերիները շարունակում են մնալ ադրբեջանական բանտերում:

Միեւնույն ժամանակ, մտահոգիչ տեղեկություններ են ստացվում Բաքվում պահվող հայ ռազմագերի Լյուդվիգ Մկրտչյանի առողջական վիճակի վերաբերյալ: Նրա փաստաբան Լուսիանա Մինասյանի փոխանցմամբ՝ Մկրտչյանի առողջական վիճակը կտրուկ վատթարացել է. նա ունի սրտի լուրջ խնդիրներ, բարձր բորբոքային ցուցանիշներ, հաճախակի գլխապտույտներ եւ ուշագնացության դեպքեր: Փաստաբանը հրապարակային դիմել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին՝ պահանջելով առնվազն հնարավորություն տալ Լյուդվիգ Մկրտչյանին կապ հաստատել կնոջ՝ Հրանուշ Շահբազյանի հետ, քանի որ ընտանիքը մեկ ամսից ավելի որեւէ տեղեկություն չի ստացել նրա մասին:

Հիշեցնենք, որ Ադրբեջանում շարունակում են պահվել Արցախի Հանրապետության 2-րդ նախագահ Արկադի Ղուկասյանը, 3-րդ նախագահ Բակո Սահակյանը, 4-րդ նախագահ Արայիկ Հարությունյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, գեներալ-մայոր Դավիթ Մանուկյանը, պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Լյովա Մնացականյանը, նաեւ այլ հայ ռազմագերիներ եւ կալանավորված անձինք:

Վերջին շաբաթվա ընթացքում նրանց վերաբերյալ նոր դատական որոշումների, ազատ արձակումների կամ պաշտոնապես հաստատված այլ զարգացումների մասին տեղեկություններ չեն հրապարակվել: Միջազգային կառույցներն ու իրավապաշտպանները, սակայն, շարունակում են պնդել, որ նրանց ազատ արձակման հարցը պետք է մնա միջազգային օրակարգում եւ ստանա շուտափույթ լուծում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ՝ ՕԳՈՍՏՈՍԻ 7-ԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ներսիսյանի եւ վեց եպիսկոպոսների (արքեպիսկոպոսների) վերաբերյալ քրեական գործը հանձնվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան եւ մակագրվել դատավոր Հակոբ Մանուկյանին: Այս մասին հայտնում է փաստաբան Արա Զոհրաբյանը:



Երեկ հայտնի է դարձել, որ նախնական դատալսումների առաջին նիստը նշանակվել է 2026թ. օգոստոսի 7-ին՝ ժամը 16:00-ին, Էջմիածին քաղաքում (Էջմիածին, Սբ. Գրիգոր Լուսավորչի փող., 15 շենք, թիվ 1 դահլիճ):

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեղադրվում է այն արարքի համար, որ նա, հանդիսանալով նաեւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի նախագահ, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, իբրեւ խոչընդոտել է օրինական ուժի մեջ մտած դատական այլ ակտի՝ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու» վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Էդգար Հովհաննիսյանի) որոշման կատարմանը:

Այդպիսի խոչընդոտում է համարվել Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ Արման Վոլոդիայի Սարոյանին կարգալույծ հռչակելու վերաբերյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ընդունված տնօրինությունը:

Միջազգային եւ ներպետական օրենսդրությամբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն ունեցող պետության մեջ իշխանությունը մեղադրյալի կարգավիճակ է շնորհել Հայոց Հայրապետին՝ եկեղեցական գործառույթ իրականացնելու համար:

Սա պատմական ամոթալի իրադարձություն է:

Վերջին հարյուր տարվա ընթացքում սա երկրորդ դեպքն է, երբ պետական իշխանությունը քրեական կամ բռնի ճնշման թիրախ է դարձնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Առաջին նման դեպքը կապված էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի հետ: Նա խորհրդային հակաեկեղեցական բռնաճնշումների տարիներին գործել է աննախադեպ ճնշումների պայմաններում, իսկ 1938 թվականի ապրիլի 6-ին Պետանվտանգության գործակալները Խորեն Ա Մուրադբեկյանին խեղդամահ են արել:

2018 թվականից ի վեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ իրականացված քայլերը, ձեւավորել են եկեղեցու նկատմամբ շարունակական պետական ճնշումների պատկեր, որոնց թվում են՝

- եպիսկոպոսների դիվանագիտական անձնագրերի չեղարկումը (2018 թ.),
- Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցող պետական ոստիկանական պահպանության դադարեցումը (2020 թ.),
- «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դուրսբերումը հանրակրթական առանձին ուսումնական ծրագրից (2020 թ.),
- քրեակատարողական հիմնարկներում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր ծառայության դադարեցումը (2024 թ.),
- զինված ուժերում եկեղեցու ինստիտուցիոնալ ներկայության էական սահմանափակումները եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն բանակից հեռացնելը (2024-2025 թթ.),
- Անմահ եւ Սուրբ Պատարագների խմբագրման փորձերը (2025-2026 թթ.),
- Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխելու եւ նրա լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ հրապարակային քաղաքական նախաձեռնությունների մեկնարկը (2025-2026 թթ.),
- բարձրաստիճան հոգեւորականների նկատմամբ քրեական հետապնդումների եւ սահմանափակող միջոցների կիրառումը (2025-2026 թթ.),
- եւ այժմ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ վեց եպիսկոպոսների նկատմամբ քրեական հետապնդումները (2026 թ.):

Անկախ քաղաքական հայացքներից եւ իրավական գնահատականներից, ակնհայտ է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ինստիտուտը Հայաստանի պատմության, ազգային ինքնության եւ պետականության հիմնասյուներից են: Այդ պատճառով նրանց շուրջ ծավալվող ցանկացած գործընթաց դուրս է մեկ քրեական գործի շրջանակներից եւ ունի պատմական, սահմանադրական ու ազգային նշանակություն:

Պատմությունը ցույց է տալիս, որ եկեղեցու եւ նրա առաջնորդների նկատմամբ ճնշումները երբեք չեն եղել միայն անձի դեմ ուղղված գործողություններ. դրանք միշտ անդրադարձել են նաեւ ազգային համերաշխությանը, հասարակական վստահությանը եւ պետականության հիմքերին:

Ցավալի է, որ իշխանությունների այս գործողությունների համար պատասխան է տալու ամբողջ հայ ազգը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը հուլիսի 30-ին ընդունել է Հայաստանում Շվեդիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էվա Սունդքվիստին: Հանդիպման ընթացքում քննարկվել են բարձր տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության եւ անվտանգ ու վստահելի թվային հաղորդակցության ոլորտներում Հայաստան-Շվեդիա համագործակցության զարգացման հնարավորությունները:

Կողմերն անդրադարձել են նաեւ շվեդական տեխնոլոգիական ընկերությունների հետ համագործակցության խորացմանն ու Հայաստանում դրանց ներկայության ընդլայնմանը, գիտահետազոտական համատեղ ծրագրերի իրականացմանը, Դիջիթեքի շրջանակում համագործակցությանը եւ Հայաստանի՝ որպես տեխնոլոգիական կենտրոնի միջազգային ճանաչելիության բարձրացմանը: Քննարկվել է նաեւ ԵՄ «Ապահով միջավայր» նախաձեռնության շրջանակում շվեդական փորձի եւ կրթական աջակցության ներգրավման, ինչպես նաեւ փոխադարձ մասնագիտական այցերի կազմակերպման հնարավորությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են նաեւ հեռահաղորդակցության եւ փոստի ոլորտներում համագործակցության ընդլայնումը՝ ընդգծելով, որ դրա զարգացումը կնպաստի երկու երկրների միջեւ գործընկերության ամրապնդմանը:

ՉԻ ՀԱՐՁԱԿՎԻ ԱՌԱՆՑ ԱՄՆ-Ի ՑԱՆԿՈՒԹՅԱՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ բանակցությունների ժամանակ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն տեղեկացրել է, որ հրեական պետությունը չի հարվածի Իրանին սեփական նախաձեռնությամբ՝ առանց Վաշինգտոնի խնդրանքի: Այս մասին հաղորդում է Associated Press-ը՝ հղում անելով իսրայելական աղբյուրներին:

Ըստ գործակալության՝ Նեթանյահուն Թրամփի հետ զրույցի ընթացքում նաեւ ընդգծել է, որ Իսրայելը իրավունք ունի հակահարված տալ Իսրայելի վրա Իրանի հարձակման դեպքում: Վարչապետը նաեւ ամերիկացի առաջնորդին տեղեկացրել է, որ Իսրայելը կշարունակի ԱՄՆ-ի հետ կիսվել Իրանի վերաբերյալ նոր հետախուզական տվյալներով: Նա վստահեցրել է ԱՄՆ նախագահին, որ Իսրայելը լիովին վստահում է Վաշինգտոնին Իրանի հարցում եւ կաջակցի Թրամփի ցանկացած որոշման:

ԿԱՐՈՂ ԵՆ ՋՐԿՎԵԼ

Մերձավոր Արեւելքում տեղակայված ամերիկացի զինծառայողների հեռախոսները կարող են առգրավվել անվտանգության նկատառումներով. այս մասին հայտնում է Reuters-ը՝ վկայակոչելով իր աղբյուրները:

«Մերձավոր Արեւելքում ԱՄՆ զորքերի բարձրաստիճան հրամանատարը զգուշացրել է զինծառայողներին, որ համացանցում հրապարակված բջջային հեռախոսով արված տեսանյութերը կարող են օգնել Իրանին հարվածել ամերիկյան ռազմակայաններին: Որոշ զինծառայողների կարող են շուտով հրահանգել հանձնել իրենց հեռախոսները»,-հայտնում է գործակալությունը՝ վկայակոչելով ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության աղբյուրներն ու ներքին հաղորդագրությունները: Գործակալության աղբյուրները նշում են, որ Հորդանանի ռազմակայաններում տեղակայված ամերիկյան զորքերը, որոնք վերջին շրջանում հաճախակի են ենթարկվել հարձակումների, առաջիկա օրերին կարող են հրաման ստանալ՝ հանձնելու իրենց հեռախոսները:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ

ՀԱՅՏՆԻ ՇԵՓՈՐԱՀԱՐԸ ԿԱԶԱՏՎԻ ԲԱՆԱԿԻՑ

Կառավարության երեկվա նիստի օրակարգում ընդգրկված էր «Հայկ Արամի Գուրգենյանին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» որոշման չգեկուցվող նախագիծը, որը հաստատվեց: Գործադիրը բանակից վերջնականապես ազատեց 26-ամյա տաղանդավոր շեփորահարին, ով նախկինում արդեն երեք անգամ՝ 2021, 2023 եւ 2025 թվականներին, կառավարության որոշումներով տարկեսման իրավունք էր ստացել:

ՈՎ է Հայկ Գուրգենյանը եւ ինչո՞ւ է ազատվում ծառայությունից

Ըստ նախագծի հիմնավորման՝ երիտասարդ երաժիշտը բավականին տպավորիչ ստեղծագործական ուղի է անցել: Ավարտելով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան՝ նա ուսումը շարունակել է Ցյուրիխի արվեստների համալսարանում: Նա դեռ 2017 թվականից Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի անդամ է, իսկ արդեն այս տարվանից՝ 2026-ից, երկու տարի ժամկետով ընդունվել է հեղինակավոր Zurich Opera Orchestra-ի կազմ:

Երաժիշտը ակտիվ համերգային գործունեություն է ծավալում նաեւ եվրոպական բեմերում՝ Լուցերնում, Ցյուրիխում, Բերնում, ինչպես նաեւ հանդես է գալիս Ծվեյցարիայի սիմֆոնիկ Նվագախմբի կազմում: Իր ծրագրերում նա պարտադիր հնչեցնում է նաեւ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ հանրահռչակելով հայկական երաժշտությունը միջազգային հարթակներում:

Ովքե՞ր են երաշխավորել

Ավանդույթի համաձայն՝ նման որոշումների համար անհրաժեշտ են ոլորտի հեղինակությունների ծանրակշիռ խոսքն ու երաշխավորությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայկ Գուրգենյանին բանակից ազատելու համար Կառավարությանը երաշխավորագրեր են ներկայացրել.

- արտիստ Տիգրան Մանսուրյանը,
- ՀՀ ժողովրդական արտիստ Հասմիկ Լեյլոյանը,
- Երեւանի կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը,
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Բալբաբյանը:

Նախագծի հեղինակները (ԿԳՄՍՆ) վստահեցնում էին, որ հաշվի առնելով արվեստագետի խոստումնալից ապագան ու նրա ներդրումը մշակույթի հանրահռչակման գործում՝նրան պարտադիր զինվորական ծառայությունից ազատելը լավագույն որոշումն է: Նշվում էր նաեւ, որ այս որոշման ընդունմամբ պետական բյուջեից լրացուցիչ ծախսեր չեն պահանջվի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱՆՑԱՎՈՐ ԽՈՒՄԲ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քաղաքային վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունների համաձայն՝ Երեւանում գործում էր կազմակերպված հանցավոր խումբ, որի անդամները մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում բնակարանային գողություններ էին կատարում: Երեւանի քրեական ոստիկանների իրականացրած լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Արմավիրի մարզի 36, 41 եւ 42 տարեկան բնակիչները, ինչպես նաեւ Երեւանի 37-ամյա բնակիչը, տեխնիկական միջոցների գործադրմամբ մայրաքաղաքի տարբեր հասցեներում իրականացրել են իրենց հանցավոր մտադրություններ՝կատարելով հափշտակություններ:

ՔՈԳՎ Երեւանի քաղաքային վարչության ՍԴՈՒՀԴՊ բաժնի ավագ քրեական ոստիկան Վարդգես Ասլանյանի խոսքով, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, Երեւանի քրեական ոստիկանները հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքով Մաշտոց-Սարյան փողոցների խաչմերուկում ձերբակալել եւ նրանցից մեկի վարած «Հյունդայի էլանտրա» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ տեղափոխել են Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քաղաքի վարչություն: 41-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են տարբեր տեսակի ոսկյա եւ արծաթյա զարդեր, ինչպես նաեւ դրամական միջոցներ, որոնք, ըստ նախնական տվյալների, հափշտակվել էին բնակարաններից մեկից: Իսկ 36-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ավելի քան 2 գրամ ընդհանուր քաշով ադամանդանման քարեր, իր կողմից շահագործված ավտոմեքենայում՝ գողացված այլ իրեր: Տղամարդիկ եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Նախաքննությունը շարունակվում է:

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ԹՄՐԱՄԻՋՈՑ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն իրացրին Երեւան քաղաքի վարչության գործընկերների եւ Երեւանի պարեկների հետ: Հուլիսի 29-ի գիշերվա ժամը 2-ին մոտ, Միքայելյան հիվանդանոցի դիմաց գտնվող գերեզմանատան տարածքում, թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալվեց եւ Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին տեղափոխվեց մայրաքաղաքի բնակիչ 39-ամյա մի տղամարդ: Նրա խուզարկությամբ հայտնաբերված թղթե երեք փաթեթում կար մեթամֆետամինի նմանվող ընդհանուր 308 գրամ զանգված: Նույն զանգվածից հայտնաբերվեց նաեւ նրա հեռախոսի պատյանում, իսկ պայուսակի մեջ եղած տարայում կար սուբուտեքս դեղահաբի մոտ 15 գրամ փոշենման զանգված: 39-ամյա տղամարդը ներկայացվել է Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանի քննչական բաժին: Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է առանձնապես խոշոր չափերով համակարգչային հափշտակության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը՝ եւս 1 անձի մասով:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Կ.Ղ.-ն տեղեկանալով ընկերության էլեկտրոնային հավելվածի միջոցով հաշիվների միջեւ փոխանցումներ իրականացնելիս հաշվի մնացորդի ստուգման գործառույթ չիրականացնելու տեխնիկական խոտանի մասին, ուրիշի գույքի հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, 2024 թվականի ապրիլի 4-8-ն ընկած ժամանակահատվածում, ապօրինի՝ առանց օրենքով, պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության, համակարգչային համակարգում՝ իր անվամբ բացված բանկային հաշվում մուտքագրել է իբր առկա տարբեր չափերի գումարներ դեպի ընկերության իր հաշվեհամար փոխանցելու վերաբերյալ տվյալներ:

Այնուհետեւ, վերը ներկայացված տեխնիկական խոտանով պայմանավորված՝ ընկերության իր էլեկտրոնային դրամապանակի եւ իր անվամբ բացված հաշվեհամարի հաշվեկշռին գեներացվել է առանձնապես խոշոր չափերով՝ 10 մլն 907 հզր ՀՀ դրամ գումար, որն այլ բանկային քարտերի փոխանցելու եղանակով հափշտակվել է:

Կ.Ղ.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Հուլիսի 16-ին վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 23:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մասիսի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ ծեծկռտուքի հետեւանքով ստացած՝ ձեռքի եւ գլխի վնասվածքներով «Մասիս» բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխվել մի քաղաքացի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները պարզել են, որ բուժօգնության տեղափոխվածը Արարատի մարզի բնակիչ, 46-ամյա Սերոբ Ծ.-ն է: Գ. Շամշյանի տեղեկություններով, ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 23:00-ի սահմաններում, Մասիս քաղաքի «Մորենա» ռեստորանային համալիրի բակում Արարատի մարզի բնակիչներ, 37-ամյա Դավիթ Գ.-ն, 46-ամյա Սերոբ Ծ.-ն, 43-ամյա Սահակ Ծ.-ն, Կոտայքի մարզի բնակիչ, 43-ամյա Մասիս Պ.-ն եւ հարսանեկան արարողության մասնակից դեռեւս ինքնությունները չպարզված անձինք, կոպտորեն խախտելով հասարակական կարգը եւ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, վիճաբանել են միմյանց հետ:

Վիճաբանության ընթացքում նրանք սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել եւ փոխադարձ հարվածներ հասցրել միմյանց, ինչի հետեւանքով Սերոբ Ծ.-ն ստացել է վնասվածքներ:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով, Սերոբ եւ Սահակ Ծ.-երը, Դավիթ Գ.-ն եւ Մասիս Պ.-ն խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Մասիսի բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ միասին ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժին:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով, դեպքի փաստով Մասիսի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 171-րդ հոդվածի 5-րդ կետի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվել է, որ Արարատի մարզի բնակիչներ, 22-ամյա Արեն Հ.-ն եւ 49-ամյա Արմեն Հ.-ն, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, «Մորենա» ռեստորանային համալիրի բակում սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել եւ հարվածներ հասցրել Սահակ Ծ.-ին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

● *Հուլիսի 20-ից 27-ը մայրաքաղաքում տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 42 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀՐԴԵՀՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Հուլիսի 29-ին՝ ամբողջ օրը, հերթական անգամ Դիլիջան համայնքի աղբավայրն այրվում էր: Հրդեհի հետեւանքով առաջացած տհաճ, ծանր հոտը, ծուխը տարածվել էին միջպետական ավտոճանապարհի, Աղստեւի հովտի վրա: Դիլիջանի աղբավայրում շատ հաճախ են հրդեհներ լինում: Դիլիջանը տուրիստական գոտի է, սակայն համայնքի աղբավայրը բարձիթողի, անմխիթար վիճակում է, աղբավայրում հրդեհները խանգարում են Դիլիջան համայնքում, ընդհանրապես՝ Տավուշի մարզում զբոսաշրջության զարգացմանը: Այդ հրդեհները նաեւ սպառնալիք են մարդկանց կյանքի ու առողջության համար: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանն այդ հարցում անգործություն է ցուցաբերում: Այդ գործում անգործություն են ցուցաբերում նաեւ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունը, բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը, էկոպարեկային ծառայությունը, Տավուշի մարզպետարանը:

ՀԵՆԱՊԱՏ ԵՆ ՍԱՐՔՈՒՄ

Հուլիսի 15-ին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Բերդ համայնքի S-10-55/H-64 /Նորաշեն/-Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կառուցապատումը ե՞րբ է սկսվել, ե՞րբ է ավարտվել, ինչքա՞ն գումար է ծախսվել այդ նպատակով, ո՞ւմ ֆինանսավորմամբ, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացրել: Բերդ համայնքի S-10-55/H-64 /Նորաշեն/-Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի հատվածի/ կմ 7+600-կմ 7+682 հողային պաստառի վերականգնման եւ հենապատի կառուցման համար հատկացվել է 46 654.4 հազար դրամ: Ի՞նչ պատճառով է նորակառույց ճանապարհին հողային պաստառի վերականգնման ու հենապատի կառուցման խնդիր առաջացել»: Հուլիսի 24-ին ստացել եմ ՏԿԵ նախարարության գլխավոր քարտուղար Արթուր Երիցյանի ստորագրությամբ պատասխան. «-Բերդ համայնքի S-10-55 Հ 64(Նորաշեն)-Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի 7-600-կմ 7+682 հատվածի հողային պաստառի վերականգնման եւ հենապատի կառուցման աշխատանքները 2020թ. սուբվենցիոն ծրագրում չեն ընդգրկվել, քանի որ ըստ Բերդի համայնքապետարանի տված տեղեկատվության՝ կառուցվող հատվածը գտնվում է անհատի սեփական հողատարածքում: Խնդիրը լուծվել է, եւ հենապատը կառուցվում է ՀՀ Տավուշի մարզպետի պատվիրակությամբ, որի պայմանագրային արժեքը կազմում է 46 654.4 հազար ՀՀ դրամ»: 2020 թվականի սուբվենցիոն ծրագրի նախագիծն ու նախահաշիվը կազմելիս ինչո՞ւ այդ ծրագրում չեն ներառել անհատի սեփական հողատարածքում գտնվող հողային պաստառի վերականգնման, հենապատի կառուցման աշխատանքները, որ հետագայում պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն է առաջացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀ

ԿՈՏԱՅՔԻՑ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նորընտիր պատգամավորներից մեկը Կոտայքի նախկին մարզպետ Ահարոն Սահակյանն է: Նրա քաղաքական կենսագրությունը վերջին տարիներին ուղեկցվել է ոչ միայն պաշտոնական առաջխաղացմամբ, այլեւ մի շարք աղմկահարույց հարցադրումներով, որոնք մինչ օրս ամբողջական պատասխաններ չեն ստացել:

2021 թվականի մայիսի 27-ին նա նշանակվեց Կոտայքի մարզպետ՝ մինչ այդ ղեկավարելով Գառնի համայնքը: Սակայն մարզպետի պաշտոնավարումը շուտով հայտնվեց վերահսկողական եւ հակակոռուպցիոն մարմինների ուշադրության կենտրոնում:

1 միլիարդ դրամի ստվերը

2024 թվականի վերջին Պետական վերահսկողական ծառայությունը հրապարակեց ուսումնասիրության արդյունքները, որոնց համաձայն՝ Կոտայքի մարզպետի աշխատակազմում 2021-2023 թվականների պետական միջոցների օգտագործման ընթացքում արձանագրվել էին շուրջ 1,07 միլիարդ դրամի առերեւույթ խախտումներ եւ անհամապատասխանություններ: Թեեւ այդ եզրակացությունը ինքնին չէր նշանակում քրեական պատասխանատվություն, այն բավական լուրջ ազդակ էր պետական կառավարման համակարգի համար: Ահարոն Սահակյանը հրապարակայնորեն հայտարարեց, որ չի համաձայնում վերահսկողական մարմնի գնահատականներին: Սակայն մինչ օրս հանրությանը չի ներկայացվել մանրամասն պարզաբանում, թե հատկապես ինչ հիմքերով է նախկին մարզպետը վիճարկում այդ ծավալի խախտումների մասին եզրակացությունը:

Մնում է առանց պատասխանի գլխավոր հարցը. ինչպե՞ս է շուրջ մեկ միլիարդ դրամի չափով արձանագրված անհամապատասխանություններից հետո պաշտոնյան ոչ միայն քաղաքական պատասխանատվություն չի կրում, այլեւ ստանում է պատգամավորական մանդատ:

Հայտարարագրային հակասություններ

2025 թվականին Ահարոն Սահակյանի շուրջ նոր հարցադրումներ առաջացան արդեն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում: Հանձնաժողովը, ուսումնասիրելով նրա հայտարարագրերը, արձանագրեց մի շարք անհամապատասխանություններ հայտարարագրված եւ կադաստրային տվյալների միջեւ:

Խոսքը վերաբերում էր՝

- անշարժ գույքի ձեռքբերման տարեթվերին,
- սեփականության իրավունքի տեսակին,
- որոշ գույքերի օտարման վերաբերյալ տվյալներին:

Հայտարարագրային նման անհամապատասխանությունները հատկապես զգայուն են այն պայմաններում, երբ իշխանությունը շարունակաբար հայտարարում է թափանցիկության եւ հակակոռուպցիոն քաղաքականության առաջնահերթության մասին:

Այս պատմությունը եւս ավարտված չէ. հանրությունը չգիտի՝ արդյոք արձանագրված անհամապատասխանությունները տեխնիկական վրիպումներ էին, թե ավելի խորքային խնդիրների հետեւանք:

Քաղաքացիների դժգոհությունները

Ահարոն Սահակյանի պաշտոնավարման ընթացքում Կոտայքում պարբերաբար հնչել են նաեւ սոցիալական եւ վարչական դժգոհություններ: Առավել հիշարժան դեպքերից մեկը Չարենցավանի անձնագրային ծառայության տեղափոխման հարցն էր, որի պատճառով բնակիչները բողոքի ակցիա կազմակերպեցին հենց մարզպետարանի դիմաց:

Այդ միջադեպը ցույց տվեց, որ մարզային կառավարման որոշումները հաճախ ընդունվում էին առանց բավարար հանրային քննարկման, իսկ քաղաքացիների դժգոհությունները հասնում էին փողոցային բողոքի:

Երբ մարզպետը հրաժարվում է դիրքորոշում հայտնել

2025 թվականին Սահակյանը հայտնվեց նաեւ քաղաքական եւ եկեղեցական հարաբերությունների շուրջ ծավալված աղմկոտ քննարկումների կենտրոնում: Երբ լրագրողները հարցրին վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Վեհափառ Հայրապետի եւ բարձրաստիճան հոգեւորականների վերաբերյալ հայտարարությունների մասին, մարզպետը հրաժարվեց մեկնաբանել թեման: Նրա ձեւակերպումը բավական խոսուն էր. նա նշեց, որ չի պատրաստվում ստուգել որեւէ հոգեւորականի կուսակրոնության հարցը, բայց միաժամանակ ընդգծեց, որ կիսում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արժեքները: Այս պատասխանն ավելի շատ քաղաքական հավասարակշռության փորձ էր հիշեցնում, քան հստակ դիրքորոշում:

Ուժային համակարգից՝ քաղաքականություն

Ահարոն Սահակյանի կենսագրությունը բնորոշ է այն պաշտոնյաներին, որոնք ուժային համակարգից տեղափոխվել են տեղական ինքնակառավարման եւ ապա՝ ազգային քաղաքականություն:

Նա ծնվել է 1980 թվականի մարտի 30-ին Գառնի գյուղում: Իրավաբանական կրթություն է ստացել Ռուսաստանում՝ սովորելով Դաշնային անվտանգության համակարգի իրավաբանական ֆակուլտետում, այնուհետեւ՝ Մոսկվայի Նոր իրավաբանական ինստիտուտում:

Աշխատել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում որպես օպերատիվ լիազոր, հետո զբաղեցրել մասնավոր հատվածի ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» եւ «Կալինա-Դվին» ընկերություններում: 2016 թվականին դարձավ Գառնի համայնքի ղեկավար, իսկ հինգ տարի անց արդեն ղեկավարում էր ամբողջ Կոտայքի մարզը:

Մարզպետից պատգամավոր. քաղաքական պատասխանատվության հարցը

Ահարոն Սահակյանի պատմությունը հետաքրքիր է ոչ միայն որպես մեկ պաշտոնյայի կենսագրություն, այլեւ որպես իշխանական քաղաքական մշակույթի ցուցիչ: Մի կողմից՝

- միլիարդ դրամի առերեւույթ խախտումների մասին արձանագրումներ,
- հայտարարագրային անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություններ,
- քաղաքացիների բողոքի ակցիաներ:

Մյուս կողմից՝

-պաշտոնավարման շարունակականություն,

- քաղաքական վստահության պահպանում,
- եւ վերջնական արդյունքում՝ Ազգային ժողովի պատգամավորի մանդատ:

Այս համատեքստում հիմնական հարցադրումը վերաբերում է ոչ միայն Ահարոն Սահակյանին, այլեւ ամբողջ իշխանական համակարգին. արդյո՞ք պետական վերահսկողության մարմինների արձանագրումները կարող են իրական քաղաքական հետեւանքներ ունենալ, եթե դրանց հասցեատերերը շարունակում են բարձրանալ իշխանական սանդուղքով:

Կոտայքի նախկին մարզպետը այժմ արդեն օրենսդիր է: Սակայն նրա շուրջ կուտակված հարցերը մարզպետարանի դռների հետեւում չեն մնացել. դրանք տեղափոխվել են խորհրդարան՝ պատգամավորական մանդատի հետ միասին:

Եւ որքան երկար այդ հարցերը մնան առանց հստակ պատասխանների, այնքան ավելի ուժեղ կլինի տպավորությունը, որ Հայաստանում քաղաքական պատասխանատվությունը շարունակում է հետ մնալ քաղաքական առաջխաղացումից:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՏԱՐՀԱՆՎԵԼ ԵՆ

Ֆրանսիայի հարավ-արեւմուտքում գտնվող Ժիրոնդ դեպարտամենտում մոլեգնող անտառային հրդեհների պատճառով իշխանությունները տարհանել են 42 հիվանդանոցի բուժանձնակազմին եւ պացիենտներին: Այս մասին հայտնել է երկրի առողջապահության նախարար Ստեֆանի Ռիստը: «Տարհանում է իրականացվել 42 բժշկական հաստատությունում», - ասել է նախարարը: Նրա խոսքով՝ տարածաշրջան է ուղարկվել լրացուցիչ 5 միլիոն բժշկական դիմակ: Ընդհանուր առմամբ հիվանդանոցներից տարհանվել է ավելի քան 4200 մարդ: Երկրի պատմության մեջ ամենախոշոր անտառային հրդեհը մարելու համար Ժիրոնդ են ժամանել շուրջ 2500 հրշեջ-փրկարարներ, այդ թվում՝ Շվեյցարիայից: Նրանց աջակցում են 1500 ֆրանսիացի զինծառայողներ եւ 1200 ոստիկաններ, որոնք ապահովում են բնակչության տարհանումը եւ հետեւում անվտանգությանը տարերային աղետի գոտում:

● *Հուլիսի 20-ից 27-ը մարզերում տարբեր կասկածանքով ձերբակալվել ու համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 54 անձ:*

ԼՈՒՐԵՐ

ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ԵՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ

Moody's Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Յունիբանկի երկարաժամկետ ավանդների վարկանիշը B1 մակարդակում, ինչպես նաեւ Բանկի b2 Baseline Credit Assessment (BCA) եւ Adjusted BCA գնահատականները: Միաժամանակ գործակալությունը Յունիբանկի երկարաժամկետ ավանդների վարկանիշի հեռանկարը «Կայուն»-ից բարձրացրել է «Դրական»:

Վարկանիշի «Դրական» հեռանկարն արտացոլում է Հայաստանում գործառնական միջավայրի բարելավումը, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ Բանկի BCA գնահատականի եւ վարկանիշների վրա: Յունիբանկի b2 BCA եւ Adjusted BCA գնահատականների վերահաստատումը պայմանավորված է Բանկի ակտիվների բարձր որակով, կայուն շահութաբերությամբ եւ ֆինանսավորման առավել անկայուն աղբյուրներից սահմանափակ կախվածությամբ:

Moody's-ի գնահատմամբ՝ Հայաստանի երկարաժամկետ աճի ներուժն ամրապնդվել է՝ պայմանավորված կայուն կապիտալ ներդրումներով, որոնք նպաստում են արտադրողականության աճին եւ բարձրացնում տնտեսության դիմակայունությունը արտաքին ցնցումների նկատմամբ: *(Գ)*

ԽՆԴՐԵԼ Է

Իսպանիայի Մադրիդի ինքնավար համայնքի կառավարությունը դիմել է երկրի կենտրոնական իշխանություններին՝ խնդրելով ակտիվացնել Եվրոպական միության Համերաշխության հիմնադրամը՝ տարածաշրջանում անտառային հրդեհների հետեւանքները հաղթահարելու համար: Այս մասին ասվում է տեղական իշխանությունների մամուլի հաղորդագրության մեջ: «Մադրիդի ինքնավար համայնքը կենտրոնական կառավարությանը կոչ է արել անհապաղ գործարկել ԵՄ Համերաշխության հիմնադրամը՝ անտառային հրդեհների հետեւանքներին դիմակայելու նպատակով», - նշվում է հաղորդագրությունում: Իշխանությունների խոսքով՝ հիմնադրամը նախատեսված է խոշոր տարերային աղետներից տուժած անդամ պետություններին աջակցելու համար եւ ֆինանսավորում է արտահերթ ծախսերի մի մասը: Այն նաեւ կնպաստի տուժած շրջանների եւ կենսական նշանակության ենթակառուցվածքների վերականգնմանը: Ներկայում Իսպանիայում մոլեգնում են մի քանի խոշոր անտառային հրդեհներ: Ամենախոշորը բռնկվել է Մադրիդի ինքնավար համայնքում եւ Ավիլա նահանգում: Անցած շաբաթ սկսված հրդեհն արդեն ընդգրկել է շուրջ 77 հազար հեկտար տարածք: Թեեւ այն դեռեւս չի հաջողվել ամբողջությամբ մեկուսացնել, իշխանությունների գնահատմամբ՝ իրավիճակը կայունացել է: Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը հուլիսի 27-ին հայտնել էր, որ այս տարվա ընթացքում հրդեհների հետեւանքով երկրում այրվել է շուրջ 150 հազար հեկտար տարածք, իսկ զոհերի թիվը հասել է 13-ի:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ

«ԿԱՅՈՒՆ» ԱՎԱՆԴ՝ ՄԻՆՉԵՎ 10% ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ

ՎՏԲ-Հայաստան Բանկի ֆիզիկական անձ հաճախորդները կարող են ձեւակերպել «Կայուն» ավանդը տարեկան մինչեւ 10% տոկոսադրույքով՝ ՀՀ դրամով միջոցները 12 ամիս ժամկետով ներդնելու դեպքում: Պրոդուկտը համատեղում է մրցունակ եկամտաբերությունը, սպասարկման ճկուն պայմաններն ու ձեւակերպման հնարավորությունը բջջային հավելվածի միջոցով կամ Բանկի մասնաճյուղերում:

ՀՀ դրամով «Կայուն» ավանդի առավելագույն տոկոսադրույքը կազմում է տարեկան 10% (եկամտաբերություն՝ մինչեւ 9,97%)՝ 4 մլն ՀՀ դրամից սկսած 1 տարի ժամկետով միջոցները ներդնելու դեպքում:

4 մլն ՀՀ դրամ եւ ավելի գումարով ավանդ ձեւակերպող հաճախորդների համար լրացուցիչ առավելություն է ՎՏԲ-Հայաստան Բանկի «Պրիվիլեգիա» անհատական փաթեթին միանալու հնարավորությունը: Փաթեթը հնարավորություն է տալիս օգտվել ընդլայնված ծառայություններից եւ արտոնություններից՝ ապահովելով առավելագույն հարմարավետություն եւ անհատականացված սպասարկում ինչպես հաճախորդի, այնպես էլ նրա ընտանիքի մեկ անդամի համար:

««Կայուն» ավանդը շարունակում է բարձր պահանջարկ վայելել մեր հաճախորդների շրջանում: 2026թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով ավանդի պորտֆելն աճել է 50%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ ձեւակերպված ավանդների քանակն ավելացել է 20%-ով: Պրոդուկտի նկատմամբ մեծ հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն մրցունակ տոկոսադրույքով, այլեւ հաճախորդների սպասարկման համակարգի շարունակական զարգացմամբ: Ավանդի ձեւակերպման դեպքում հաճախորդները ստանում են հատուկ պայմաններով սպասարկվելու հնարավորություն «Պրիվիլեգիա» գոտիներում, որոնց ցանցը շարունակում է ընդլայնվել ամբողջ երկրում: Բացի այդ, ավանդը հնարավոր է արագ եւ հարմար ձեւակերպել հեռավար եղանակով՝ նոր բջջային հավելվածի միջոցով, ինչը նույնպես նպաստել է ավանդների ծավալի աճին»,- նշում է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Ավանդի տոկոսները վճարվում են հաճախորդի ընտրությամբ՝ ավանդի ժամկետի ավարտին, ամսական կտրվածքով կամ ամսական կապիտալացմամբ: Միջոցների տեղաբաշխումը հասանելի է երեք արժույթով՝ ՀՀ դրամով, ՌԴ ռուբլով եւ եվրոյով:

«Կայուն» ավանդի պայմանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում, բանկի մասնաճյուղերում, ինչպես նաեւ Կոնտակտային կենտրոնում՝ 87 87 հեռախոսահամարով:

Ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Ավանդի տոկոսագումարից գանձվող եկամտահարկը կազմում է տարեկան 10%:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

IDBANK-Ը ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Ամենահետաքրքիր գաղափարները միշտ չէ, որ ծնվում են գրասենյակներում: Երբեմն դրանք ծնվում են վրաններում, ճնարկումների ու բազմաթիվ սարտափների միջավայրում: Seaside Startup Summit-ն այս տարի կրկին համախմբել է հայրուրավոր մարդկանց մեկ նոյատակի շուրջ՝ ստեղծելու վաղվա տեխնոլոգիական լուծումները:

Նորարարական լուծումների շարքում իր հարթակը ներկայացրեց նաեւ IDBank-ը: Summit-ի բեմում Rate.Trading-ի հնարավորությունների մասին խոսեց հարթակի կոմերցիոն ղեկավար Հմայակ Ավանեսյանը՝ ներկայացնելով արտարժույթի առքուվաճառքի նոր մոտեցումը Հայաստանում:

«Rate.Trading-ը Հայաստանում արտարժույթի փոխանակման նոր հարթակ է: Այն հնարավորություն է տալիս գնել եւ վաճառել ինը տեսակի արտարժույթ՝ շահավետ փոխարժեքներով: Հարթակը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հնարավորություն է տալիս բանկին առաջարկել նաեւ իրենց փոխարժեքները, ինչը փոխարկման պայմանները դարձնում է ավելի շահավետ եւ ճկուն», - ընդգծեց Rate.Trading հարթակի կոմերցիոն ղեկավար Հմայակ Ավանեսյանը:

Rate.Trading-ն առաջարկում է մի շարք առավելություններ.

Հարմարավետություն. Հարթակն օգտատերերին հնարավորություն է տալիս ընտրել տվյալ պահին առաջարկվող լավագույն փոխարժեքը եւ կատարել գործարքը: Բացի այդ, կարելի է առաջարկել նաեւ սեփական գինը, հայտը բավարարելու դեպքում, Բանկի հետ գործարքը կկատարվի ավտոմատ կերպով:

9 արտարժույթ՝ մեկ հարթակում. Գործարքներ կարելի է իրականացնել դրամով, դոլարով, եվրոյով, ինչպես նաեւ ֆունտով, դիրհամով, յուանով, իենով եւ շվեյցարական ֆրանկով:

Անվտանգություն. Rate.Trading-ի աշխատանքը կառուցված է IDBank-ի թվային ենթակառուցվածքի հետ ինտեգրման հիման վրա: Օգտատերը պարզապես գրանցվում է Rate.Trading-ում, անվտանգ սինքրոնացնում իր բանկային եւ առեւտրային հաշիվները եւ անմիջապես իրականացնում արտարժույթի գործարքներ:

Պարզ ինտերֆեյսի, ամբողջությամբ թվայնացված գործընթացների եւ առաջատար թվային բանկի աջակցման շնորհիվ Rate.Trading-ը դառնում է հարմար գործիք նրանց համար, ովքեր փնտրում են շահավետ փոխարժեքներ եւ գնահատում իրենց ժամանակը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԱՐԵԴԱՐՁ

ՆՇԵԼ Է ՇՔԵՂ ԵՐԵԿՈՒՅԹՈՎ

Քլոե Քարդաշյանը որդու՝ Թեյթումի 4-ամյակի առթիվ կազմակերպել է տոնավորիչ ծննդյան խնջույք, որն ամբողջությամբ ոգեշնչված էր «Zootopia» մուլտֆիլմից: Իր տան բակը նա վերածել էր «Tatumtopia»-ի՝ ստեղծելով մուլտֆիլմի աշխարհը հիշեցնող միջավայր:

Հյուրերին դիմավորում էր «Little Rodentia» գրությամբ կամարը, որը հղում էր «Zootopia»-ում ներկայացված փոքր կրծողների թաղամասին: Մուտքի մոտ տեղադրված էր նաեւ հումորային ցուցանակ՝ «Միայն մկներ, համստերներ, առնետներ եւ փոքր կրծողներ. բարձրահասակ կենդանիների մուտքն արգելվում է»:

Երեխաների համար կազմակերպվել էր փոքր կենդանաբանական անկյուն (petting zoo), որտեղ նրանք հնարավորություն ունեին շփվելու տարբեր կենդանիների հետ: Խնջույքի ողջ սննդացանկը նույնպես ձեւավորված էր «Zootopia»-ի թեմայով: Հյուրերին հյուրասիրել են հավի նագեթս, պրեցելի կտորներ, եգիպտացորենի խմորապատ երշիկներ, վաֆլի կարտոֆիլ եւ քեսադիլյայի ռոլեր:

Աղանդերի սեղանին տեղ էին գտել մուլտֆիլմի հերոսներով զարդարված քափքեյքեր, քեյք-փոփսեր, ինչպես նաեւ բլիթների բարձր աշտարակ՝ «Happy 4th Birthday Tatum» շնորհավորական գրությամբ: Խնջույքի գլխավոր զարդը եղել է չորս հարկանի մեծ տորթը, որը եւս պատրաստված էր «Zootopia»-ի ոճով:

Տոնակատարությանը մասնակցել են Թեյթումի ավագ քույրը՝ Թրուն, զարմուհի Դրիմը, տատիկը՝ Քրիս Ջենները, ինչպես նաեւ ընտանիքի մտերիմներն ու ընկերները: Երեխաները զվարճացել են մուլտֆիլմի հերոսներ Նիք Ուայլդի եւ Ջուդի Հոփսի կերպարներով հագնված անիմատորների հետ: Խնջույքի ընթացքում նշվել է նաեւ Թրիստան Թոմփսոնի կրտսեր եղբոր՝ Ամարիի 20-ամյակը: Նրա համար պատրաստվել էր առանձին «Zootopia»-ի թեմայով տորթ:

Հիշեցնենք, որ Քլոե Քարդաշյանն ու նախկին զուգընկեր Թրիստան Թոմփսոնը միասին ունեն երկու երեխա՝ Թրուին եւ Թեյթումին: Որդու ծննդյան օրը Քլոեն նաեւ Instagram-ում հրապարակել էր տարիների ընթացքում արված ընտանեկան կադրերից կազմված հուզիչ տեսանյութ՝ մակագրելով. «Շնորհավոր 4-ամյակ, իմ հրեշտակ տղա»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՋԵՐՄ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ

Բաքվում ընթացող ըմբշամարտի Մ17 տարեկանների աշխարհի առաջնությունում 71 կգ քաշային կարգում ոսկե մեդալ նվաճած հայ ըմբիշ Ջանես Նազարյանը խոսել է իր հաղթանակի եւ մրցաշարի կազմակերպչական մակարդակի մասին:

Ադրբեջանական report.az կայքի փոխանցմամբ՝ մեր ըմբիշը նշել է, որ գոհ է իր գրանցած արդյունքից եւ բարձր է գնահատել մրցաշարի կազմակերպվածությունը, գրում է armsport-ը:

«Տրամադրությունս շատ լավ է: Մեզ այստեղ շատ ջերմ եւ բարձր մակարդակով են ընդունել: Մրցաշարը լավ է կազմակերպված, իսկ մասնակիցներն էլ բավականին ուժեղ էին: Ուրախ եմ հաղթանակիս համար»,- ադրբեջանական աղբյուրը մեջբերում է հայ մարզիկի խոսքերը:

Անդրադառնալով կազմակերպչական հարցերին՝ Նազարյանն ընդգծել է, որ հայկական պատվիրակությունը որեւէ խնդրի չի բախվել.

«Բաքվում աշխարհի առաջնությանը մեր մասնակցության համար բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծված էին: Մեզ շատ լավ են ընդունել, տրվել են հարմարավետ նախապատրաստվելու եւ մրցելու բոլոր հնարավորությունները»,- նշել է աշխարհի նորընծա չեմպիոնը:

Հիշեցնենք, որ Ջանես Նազարյանը ոսկե մեդալակիր էր դարձել՝ վճռորոշ գոտեմարտում պարտության մատնելով Ռուսաստանի ներկայացուցիչ Ասլան Ջուեւին:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՖԻՖԱ-ի կարգապահական կոմիտեն ԱԱ-2026-ի խաղերի արդյունքներով վարույթ է սկսել Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիայի նկատմամբ: armsport-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է կազմակերպության պաշտոնական կայքը:

Արգենտինական կողմը կասկածվում է ՖԻՖԱ-ի կարգապահական օրենսգրքի մի քանի հոդվածների խախտման մեջ, ներառյալ՝ մարզական միջոցառումը սպորտի հետ կապ չունեցող նպատակներով օգտագործելը (խոսքը Ֆոլկլենդյան կամ Մալվինյան կղզիներին վերաբերող պաստառի ցուցադրման մասին է):

Բացի այդ, ՖԻՖԱ-ն առանձին կարգապահական գործեր է հարուցել աշխարհի առաջնության եզրափակիչի արդյունքներով: Հարձակման մասին հոդվածի խախտման կասկածանքով հետաքննություն է սկսվել Արգենտինայի ազգային հավաքականի ֆուտբոլիստներ Նաուել Մոլինայի եւ Լեանդրո Պարեդեսի, ինչպես նաեւ թիմի գլխավոր մարզչի օգնական Ռոբերտո Այալայի նկատմամբ: Մոլինային մեղսագրվում է երկու դրվագ, որոնցից մեկը որակվում է որպես հարձակման փորձ, իսկ Պարեդեսին՝ երեք առանձին դրվագ:

ՖԻՖԱ-ն ընդգծել է, որ գործով անցնող բոլոր անձինք հնարավորություն են ստացել ներկայացնել իրենց բացատրությունները: Գործերով վերջնական որոշումները կկայացվեն ավելի ուշ՝ նյութերի քննարկման եւ ուսումնասիրության ավարտից հետո:

ԼՈՒՐԵՐ

ՀԵՌԱՑԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ Հրաչյա Ռոստոմյանը հեռացել է զբաղեցրած պաշտոնից: Այդ մասին Ռոստոմյանը հայտնել է ֆեսյբուքյան գրառումով:

«Սիրելի՛ ընկերներ, 20 տարի Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան ղեկավարելուց հետո այսօր հրաժեշտ եմ տալիս այս պատասխանատու պաշտոնին: 2006 թվականին, երբ ստանձնեցի ֆեդերացիայի ղեկավարումը, հայկական բասկետբոլը գտնվում էր չափազանց ծանր վիճակում: Չկային ազգային հավաքականներ, չէին անցկացվում կանոնավոր առաջնություններ, բացակայում էին զարգացման համակարգային ծրագրերը: Մենք փաստացի սկսեցինք ամեն ինչ զրոյից: Տարիների ընթացքում համատեղ աշխատանքի, նվիրումի եւ հետեւողականության շնորհիվ կարողացանք վերակենդանացնել այս գեղեցիկ մարզաձեւը Հայաստանում:

Այսօր հեռանում եմ այն համոզմամբ, որ թողնում եմ կայացած եւ զարգացող ֆեդերացիա՝ մարտունակ ազգային հավաքականներով, բազմաթիվ տարիքային առաջնություններով, միջազգային համագործակցությամբ եւ, ամենակարեւորը, իր գործին նվիրված ու բարձր մասնագիտական որակներ ունեցող թիմով: Այս ճանապարհը հնարավոր չէր լինի անցնել առանց բոլոր նրանց, ովքեր այս տարիների ընթացքում եղել են մեր կողքին:

Շնորհակալություն եմ հայտնում մարզիկներին, մարզիչներին, մրցավարներին, ակումբներին, գործադիր կոմիտեի անդամներին, գործընկերներին, հովանավորներին եւ բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել հայկական բասկետբոլի զարգացման գործում: Սրտանց հաջողություն եմ մաղթում Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նոր նախագահին, գործադիր կոմիտեին եւ ամբողջ թիմին: Վստահ եմ, որ դուք կկարողանաք ոչ միայն պահպանել մեր ձեռքբերումները, այլեւ հայկական բասկետբոլը հասցնել նոր ու ավելի բարձր մակարդակի: Շնորհակալություն բոլորիդ այս երկար ճանապարհին ինձ հետ անցնելու համար:

Մաղթում եմ, որ հայկական բասկետբոլը շարունակի զարգանալ, հաղթել եւ արժանապատվորեն ներկայացնել Հայաստանը միջազգային ասպարեզում»,- նշված է Հրաչյա Ռոստոմյանի ուղերձում:

ՌՈՆԱԼԴՈՒՆ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է

UFC-ի թեթեւ քաշային կարգի նախկին չեմպիոններ Խաբիբ Նուրմագոմեդովն ու Քոնոր Մակգրեգորը հրավիրված են Պորտուգալիայի ազգային հավաքականի եւ Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ-Նասրի» աստղային հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի եւ Ջորջինա Ռոդրիգեսի հարսանյաց արարողությանը: Ըստ armsport-ի՝ այս մասին հաղորդում է Gossip Magazin պարբերականը:

Աղբյուրի տեղեկություններով՝ հարսանեկան խնջույքը կկայանա արդեն հաջորդ շաբաթ: Հյուրերի ցանկում ընդգրկված են ինչպես հայտնի ֆուտբոլիստներ, այնպես էլ տարբեր ոլորտների համաշխարհային աստղեր: Մասնավորապես, հրավիրվածների թվում են Ռիո Ֆերդինանդը, Վինիսիուս Ժունիորը, Կիլիան Մբապեն, Ռոդրիգոն, դերասաններ Վին Դիզելն ու Էսթեր Էքսպոսիտոն, երաժիշտներ Ռիհաննան, Ջենիֆեր Լոպեսը, Դրեյքն ու Թրեւիս Սքոթը, հեռուստահաղորդավար Պիրս Մորգանը, ինչպես նաեւ հայտնի բլոգեր IShowSpeed-ը:

41-ամյա Կրիշտիանու Ռոնալդուն եւ 32-ամյա Ջորջինա Ռոդրիգեսը միասին են 2016 թվականից: Ֆուտբոլիստն իր սիրելիին ամուսնության առաջարկություն էր արել 2025 թվականի օգոստոսին: Պիրս Մորգանի հետ ունեցած զրույցում Ռոնալդուն նշել էր, որ հարսանիքը նախատեսում են կազմակերպել ԱԱ-2026-ից հետո՝ նախքան Սաուդյան Արաբիայի առաջնության նոր մրցաշրջանի մեկնարկը:

Ջույգն ունի երկու ընդհանուր դուստր՝ Ալանա Մարտինան (ծնվել է 2017 թ. նոյեմբերին) եւ Բելլա Էսմերալդան (ծնվել է 2022 թ. ապրիլին): Բացի այդ, նրանք դաստիարակում են եւս երեք երեխայի՝ Կրիշտիանու-կրտսերին (ծնված 2010 թ.) եւ երկվորյակներ Մատեոյին ու Եվային (ծնված 2017 թ.), որոնք լույս աշխարհ են եկել փոխնակ մայրերի օգնությամբ:

Հիշեցնենք, որ 2018 թվականին Նուրմագոմեդովը հաղթել էր Մակգրեգորին՝ չորրորդ ռաունդում կիրառելով ցավեցնող հնարք: Այդ մենամարտը MMA-ի պատմության մեջ մտել է որպես ամենաշահութաբեր եւ դիտված դիմակայությունը: Դաղստանցի մարզիկն իր պրոֆեսիոնալ կարիերան ավարտել է 2020 թվականի հոկտեմբերին՝ մնալով անպարտելի. նրա ակտիվում գրանցված է 29 հաղթանակ եւ չեմպիոնական տիտղոսի երեք հաջող պաշտպանություն:

● *Խամաճիկների պետական թատրոնում օգոստոսի 1-ին՝ ժամը 12:30-ին, կկայանա «Փոքրիկն ու Կառլսոնը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը կարո՞ղ է պաշտոնավարման ընթացքում անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ իրականացնել այլ աշխատանք:

Վահե Ղուկասյան, 34 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների համար սահմանված են պաշտոնին ներկայացվող որոշակի պահանջներ, որոնք թույլ են տալիս ապահովել պաշտոնական լիազորությունների՝ հավանական շահերի բախումից զերծ, արդյունավետ եւ անաչառ իրականացումը: «Հանրային ծառայության մասին» օրենքի տեսանկյունից հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից: Սույն օրենքով հստակեցվում են նաեւ ձեռնարկատիրական գործունեությունը, գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հասկացությունները: Նշված պահանջների խախտումը նախատեսում է պատասխանատվության առավել խիստ միջոցը՝ պաշտոնական լիազորությունների դադարեցումը կամ զբաղեցրած պաշտոնից ազատումը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են մկրտության համար անհրաժեշտ պայմանները, ի՞նչ է անհրաժեշտ մկրտվելու համար:

Գոհար Գաբրիելյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կնքահայրը պետք է լինի մկրտված, չափահաս, ցանկալի է՝ ոչ մոտ ազգական (ցանկալի չէ, որ հորեղբայրը, քեռին, հորեղբոր, քեռու, մորաքրոջ կամ հորաքրոջ զավակները լինեն կնքահայր), ուղղափառ դավանանք ունեցող:

Մկրտվողը չափահաս լինելու դեպքում պետք է պատշաճ եւ հարմար հագուստով լինի: Մկրտվողը, եթե չափահաս է, պետք է լինի սոված՝ հաղորդություն վերցնելու համար, չափահաս աղջիկները պետք է չշպարվեն, զարդեր չկրեն, զուգագուլպաներ չհագնեն, որպեսզի ծնկները բաց լինեն լվանալու համար:

Մկրտվողի ծնողները պետք է մկրտված լինեն, հակառակ դեպքում պետք է մկրտվեն երեխայի հետ:

Եկեղեցի մկրտության համար պետք է բերել՝

1. Երկու մոմ
2. Խաչ (ըստ մկրտվողների քանակի)
3. Նարոտ (սպիտակ եւ կարմիր թելեր, ոլորած մեկը մյուսով (ըստ մկրտվողների քանակի)
4. Չօգտագործված սրբիչ (ըստ մկրտվողների քանակի):

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արտակարգ դեպք Երեւանում. ժողովրդին հայտնի «Բոքսի հայաթում» փտած ծառը տապալվել ու ընկել է կայանված «Nissan Rogue»-ի վրա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 10 + 15	+ 26 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 14	+ 26 + 29
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21	+ 32 + 35
Գեղարքունիք	+ 11 + 16	+ 26 + 29
Լոռի	+ 11 + 16	+ 25 + 28
Տավուշ	+ 12 + 16	+ 26 + 28
Արագածոտնի լեռներ	+ 10 + 14	+ 26 + 29
Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 21	+ 31 + 36

Արարատ	+ 18 + 22	+ 35 + 37
Արմավիր	+ 18 + 22	+ 35 + 38
Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15	+ 26 + 29
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 22	+ 36 + 39
Սյունիքի լեռներ	+ 11 + 14	+ 20 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 17	+ 26 + 29
Սյունիքի հովիտներ	+ 19 + 23	+ 32 + 35
Երեւան	+ 20 + 22	+ 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*